

## **Հայաստանի Հանրապետությունում խմելու ջրի մատակարարման ոլորտում իրականացվող սակագնային քաղաքականության մասին**

Խմելու ջրի մատակարարման ոլորտում սակագնային քաղաքականությունն իրականացվում և սակագները սահմանվում են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից: Սակագների սահմանման ու վերանայման գործընթացը, սակագնային համակարգի մշակման սկզբունքները կարգավորվում են [ՀՀ ջրային օրենսգրքով](#), Հանձնաժողովի որոշումներով հաստատված կարգով և մեթոդիկաներով ([02.11.2016թ. N296Ն](#), [09.12.2016թ. N397Ա](#), [05.04.2005թ. N33Ն](#)), ինչպես նաև պետություն-մասնավոր գործընկերության գործարքների շրջանակում կնքված պայմանագրերով: Ներկայումս խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա ունի և Հանձնաժողովի կարգավորման դաշտում է գտնվում [«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն](#):

Հանձնաժողովի կողմից խմելու ջրի մատակարարման ոլորտում սակագնային քաղաքականությունն իրականացնելիս նախատեսված է երկու մոտեցում:

**Առաջին մոտեցում:** ՀՀ կառավարությունը «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրկուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցելու նպատակով մրցակցային երկխոսության ընթացակարգով կազմակերպել է վարձակալի ընտրության միջազգային մրցույթ, որի արդյունքներով հաղթող է ճանաչվել ֆրանսիական «Վեոլիա Օ-Կոնպանի Ժեներալ Դեզ Օ» ընկերությունը ([ՀՀ կառավարության 27.10.2016թ. N43-24 արձանագրային որոշում](#)): Նշված ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում հիմնադրել է ինքնուրույն իրավաբանական անձ՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն, որի հետ կնքվել է 15-ամյա վարձակալության պայմանագիր: Մրցույթի արդյունքում ձևավորվել են 15 տարվա բազիսային սակագներ, որոնք համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին տրամադրված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիայի պայմանների՝ վարձակալության 2-րդ տարվանից սկսած յուրաքանչյուր տարի պետք է ճշգրտվեն՝ հաշվի առնելով հետևյալ երեք գործոնները.

- 1) մանրաձախ ջրամատակարարման ծավալը,
- 2) սղաճը,
- 3) «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին մատակարարվող էլեկտրաէներգիայի սակագների փոփոխությունը:

Միննույն ժամանակ, յուրաքանչյուր տարվա ճշգրտվող սակագները նվազեցվում են նաև «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ջրային համակարգն այլ նպատակներով օգտագործումից և խմելու ջուրը ոռոգման նպատակով մատակարարելուց ստացված լրացուցիչ հասույթին համապատասխան:

Բազիսային սակագների ճշգրտման մեխանիզմը, հաշվարկի ձևը և ներկայացման գործընթացը նկարագրված է [Հանձնաժողովի 09.12.2016թ. №397Ա որոշմամբ](#) հաստատված «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիայի պայմաններում (Հավելված №3. «Սակագներ և սակագների ճշգրտումներ»):

*Երկրորդ մոտեցում:* [Հանձնաժողովի 05.04.2005թ. №33Ն որոշմամբ](#) հաստատվել է խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցման սակագների մշակման մեթոդիկան, որը կկիրառվի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայություններ մատուցող այն անձանց նկատմամբ, որոնց Հանձնաժողովի կողմից կտրամադրվի համապատասխան լիցենզիա և չի կիրառվի սակագների ձևավորման վերը նշված առաջին մոտեցումը կամ նմանատիպ այլ մոտեցում: Հանձնաժողովի 05.04.2005թ. №33Ն որոշմամբ հաստատված մեթոդիկան սահմանում է, որ սակագների մշակման գործընթացն իրականացնելիս պետք է առաջնորդվել անհրաժեշտ տարեկան հասույթի ապահովման սկզբունքով, համաձայն որի անհրաժեշտ հասույթը բավարարում է իրականացնելու ջրամատակարարի հուսալի, անվտանգ և շարունակական գործունեության համար պահանջվող բոլոր գործառնական ծախսերը և ապահովելու ներգրավված կապիտալի դիմաց ողջամիտ շահույթը: Ընդ որում, ջրամատակարարի ակտիվների ֆինանսավորման աղբյուրներից, պայմաններից և հնարավորություններից ելնելով՝ թույլատրելի շահույթի որոշման համար նախատեսված է երկու եղանակ՝ զուտ ակտիվների շահույթի նորմայի եղանակ և անհրաժեշտ ֆինանսական ծախսերի հատուցման եղանակ:

Խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում (կեղտաջրերի մաքրում) իրականացնող անձի կողմից ստացվում են ֆինանսական և տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվություններ, որոնք վերլուծվում, ամփոփվում և հրապարակվում են [Հանձնաժողովի ինտերնետային կայքում](#):

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագները սահմանված են [Հանձնաժողովի 27.11.2020թ. №422Ն որոշմամբ](#):

**«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների սակագները  
և հիմնական ցուցանիշները**

<b>№</b>	<b>Անվանումներ</b>	<b>Չափման միավոր</b>	<b>Մեծությունը</b>
1.	<b>Ընդամենը բաժանորդներին մանրածախ ծառայությունների մատուցման գումարային սակագին (ներառյալ ԱԱՀ-ն), որից՝</b>	<b>դրամ/խմ</b>	180,0
1.1	խմելու ջրի մատակարարման ծառայության մատուցման համար	դրամ/խմ	153,0
1.2	ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայության մատուցման համար	դրամ/խմ	27,0
2.	<b>«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման սակագին (ներառյալ ԱԱՀ-ն)</b>	<b>դրամ/խմ</b>	11,021
3.	<b>Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող այլ անձանց, ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող համայնքներին, համայնքային բյուջետային հիմնարկներին և ոչ առևտրային կազմակերպություններին մեծածախ ծառայությունների մատուցման սակագներ՝</b>	-	-
3.1	խմելու ջրի մատակարարման մեծածախ ծառայության մատուցման սակագին (ներառյալ ԱԱՀ-ն)	դրամ/խմ	36,0
3.2	ջրահեռացման մեծածախ ծառայության մատուցման սակագին (ներառյալ ԱԱՀ-ն)	դրամ/խմ	18,0
4.	<b>Սակագներն ուժի մեջ մտնելու ամսաթիվը</b>	-	01.01.2021թ.
5.	<b>Ընկերության անհրաժեշտ հաշվարկային տարեկան հասույթ (առանց ԱԱՀ-ի) (5-րդ պայմանագրային տարի)</b>	<b>մլն դրամ</b>	19 520,85
6.	<b>Մանրածախ ջրամատակարարման բազիսային ծավալ (5-րդ պայմանագրային տարի)</b>	<b>մլն խմ</b>	128
7.	<b>Ջրամատակարարման համակարգին միացած բաժանորդների քանակը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, այդ թվում՝</b>	<b>բաժանորդ</b>	787 240
7.1	<i>բնակչություն</i>	<i>բաժանորդ</i>	<i>749 393</i>
7.2	<i>բյուջետային</i>	<i>բաժանորդ</i>	<i>3 603</i>
7.3	<i>այլ</i>	<i>բաժանորդ</i>	<i>34 244</i>
8.	<b>Ջրահեռացման համակարգին միացած բաժանորդների տոկոսը՝ ըստ հեռացվող և սպառվող մանրածախ ջրի ծավալների հարաբերակցության (2020 թվական)</b>	%	78,81%
9.	<b>Հավաքագրման տոկոսը 2020 թվականին (11 ամիս)</b>	%	86,0%